Մայա Բլիաձե
Մանանա Սեխնիաշվիլի

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

Աշակերտի գիրք

Երկրորդ մաս

 სულაკაურის
გამომცემლობა

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից, 2023 թվականին:

Աշխարհագրություն 11
Աշակերտի գիրք
Մաս 2
Հեղինակներ՝ **Մայա Բլիաձե, Մանանա Սեխնիաշվիլի**

Խմբագիր՝ **Մանանա Նիժարաձե**
Քարտեզագիրներ՝ **Անա Իրեմաշվիլի, Սոփիո Խորբալաձե**
Դիզայներ՝ **Իա Մախաթաձե**
Տեխնիկական դիզայներ՝ **Թինաթին Բերբերաշվիլի**

Առաջին հրատարակություն, 2023
Լուսանկարներ՝ էջ 45, 48, 118 © Պաատա Վարդանաշվիլի, էջ 232 © Վրաստանի սահմանային ոստիկանություն, էջ 283 © Վրաստանի ազգային գրադարան, մնացած լուսանկարները՝ © www.wetransfer.com
© Սուլակաուրիի հրատարակչություն, 2023
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՍՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցեն. Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-479-1

Geography 11
Student's Book
Part 2

© Sulakauri Publishing, 2023
All rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

Բովանդակություն

ԹԵՄԱ 1
Կլիմայի գլոբալ փոփոխություն 4

Համալիր առաջադրանք 1
Տուպունգատոյի սառցադաշտը՝ Երկրի ամենափխրուն գոտիներից մեկը 6

1. Սառցադաշտերի հալչելը 8
2. Ջրագրական-օդերևութաբանական բնական վտանգներ 32
3. Բնական վտանգների հարմարվողական միջոցառումներ: Մեղմացում և կանխարգելում: 51

Համալիր առաջադրանք 2
Տեյտիոտայի գործը 75

4. Փախստականներ, ներքին տեղահանվածներ 77
5. Կանաչ էկոնոմիկա 94
6. Կանաչ էներգետիկա 120
7. Քաղցրահամ ջրի հիմնախնդիրը 147
8. Օդի աղտոտումը 178

Հավելված

ԹԵՄԱ 2
Գլոբալ քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները 204

9. Երկրների կազմաձևը, սահմանի տեսակները 206
10. Երկրների խմբավորումը: Հյուսիս և Հարավ 236

Համալիր առաջադրանք 3
Թուրքիա: Օսմանյան կայսրությունից մինչև գլոբալ պետություն 255

11. Մշակութային գլոբալացում 257
12. Առողջապահություն, կրթություն, սով 268
13. Հակամարտություններ, ռեսուրսային պատերազմներ, տարածքայնություն 295

Համալիր առաջադրանք 4
Խաղաղության պարկը Վրաստանում՝ միջպետական հակամարտությունների կարգավորման կայուն միջոց 329

14. Անվտանգություն, խաղաղության պահպանում 331

Հավելված

ԹԵՄԱ 2

Գլոբալ քաղաքական մարտահրավերները և փոփոխությունները

Այստեղ կտեղեկանաս, որ...

- Երկրի աշխարհագրական թաղանթն ազդում է աշխարհի երկրների բնութագրերի (օրինակ՝ կազմաձև, սահմանի տեսակներ և այլն) և գլոբալ քաղաքական կամ աշխարհաքաղաքական գործընթացների վրա (երկրների խմբավորում՝ Հյուսիսի և Հարավի պետություններ, քաղաքական և մշակութային գլոբալացում)։
- Ժամանակակից աշխարհում ընթացող քաղաքական գործընթացները և բնակչության հիմնական սոցիալական բնութագրերը (առողջություն, կրթություն, սով) սերտորեն կապված են իրար հետ։
- Ժամանակակից աշխարհում տեղի են ունենում մի շարք գլոբալ քաղաքական գործընթացներ՝ հակամարտությունները, «պատերազմները» ռեսուրսների հայթայթման համար, ահաբեկչությունը, անվտանգությունը, խաղաղության պահպանումը պետք է նախատեսեն ապագա սերունդների շահերը։

Թեմայի մասին

Գլոբալիզմը բազմաչափ երևույթ է, որը համարում են աշխարհի տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային ինտեգրման գործընթաց։

Ժամանակակից գլոբալ փոփոխությունները, դրա դրական և բացասական կողմերը չափազանց հրատապ են, քանի որ աշխարհի ցանկացած երկրի ազգային էկոնոմիկայի և բիզնես հատվածի զարգացման ապագա ռազմավարությունը հենց գլոբալ գործընթացների հետ է կապվում։

Տնտեսական կյանքի միջազգայնացումը, անդրազգայնացումը, ինտեգրումն ու ազատականացումը այն կարևոր գործոններ են, որոնք սահմանում են գլոբալացման ժամանակակից վիճակը։

Նորություններով լի այսօրվա աշխարհում հիմնովին փոխվում է նաև աշխարհի երկրների գլոբալ քաղաքականությունը, բայց դա ամենևին էլ չի թուլացնում պետությունները։ Ընդհակառակը, նրանց տալիս է տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային ոլորտներում ազգային ու համաշխարհային գործունեությունը նորովի ըմբռնելու, ինչպես նաև, պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն առավելագույն և բազմակողմանի օգտագործելու հնարավորություն։

9. Երկրների կազմաձևը, սահմանի տեսակները

Հիշի՛ր

1. Ինչպիսի՞ն է աշխարհի քաղաքական քարտեզը:
2. Ինչո՞ւ է 1960 թվականը կոչվում «Աֆրիկայի տարի»:
3. Ինչպե՞ս է որոշվում այս կամ այն օբյեկտի աշխարհագրական դիրքը, և ի՞նչ նշանակություն ունի այն:
4. Ինչպիսի՞ սահմաններ կան:
5. Ինչո՞ւ են փոխվում պետությունների սահմանները:

Անկլավ
Պետության տարածք կամ նրա մաս, որին բոլոր կողմերից սահմանակցում են օտար երկրի հողեր: Եթե անկլավն ունի ելք դեպի ծով, այն կոչվում է կիսաանկլավ:

Ինչպե՞ս էր ձևավորվում աշխարհի քաղաքական քարտեզը:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը շատ դժվար և երկար գործընթաց է, որը տևել է հազարամյակներ: Այս ընթացքում այն անցել է պատմական մի քանի փուլ: Տարբեր փուլերում աշխարհի քաղաքական քարտեզի առաջատար քաղաքական սուբյեկտները տարբեր երկրներ էին, և նրանց միջև սահմանները անընդհատ փոփոխվում էին:



Նկ. 9.1. Աշխարհի քաղաքական քարտեզի տարրերը

Էքսկլավ
Պետության տարածքի մաս, որը չունի սահման երկրի հիմնական մասի հետ և գտնվում է օտար պետության սահմանների մեջ: Բացի այդ, պարտադիր չէ, որ այն շրջապատված լինի միայն մեկ երկրի տարածքով, նրան կարող են սահմանակցել մի քանի պետություններ:

Առաջադրանք

1. Ինչի՞ համար է քեզ անհրաժեշտ իմանալ աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման փուլերը:
2. Համաձա՞յն ես այն կարծիքի հետ, որ աշխարհի քաղաքական քարտեզը պատմական կատեգորիա է և ժամանակի ընթացքում փոխվում է: Պատասխանը հիմնավորի՛ր:
3. Քո կարծիքով, ինչո՞ւ էր յուրաքանչյուր պատմական դարաշրջան տարբեր կերպ ազդում աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման գործընթացի վրա, այն դեպքում, երբ քաղաքական քարտեզի փոփոխության պատճառներ (օրինակ՝ աշխարհագրական հայտնագործություններ, պատերազմներ, կրոնական հակամարտություններ, սոցիալական հեղափոխություններ և այլն) միանման բնորոշ էին բոլոր դարաշրջաններին:
4. Վերլուծի՛ր նկ. 9.1-ը և որոշի՛ր, թե ինչ օբյեկտներից է բաղկացած ժամանակակից աշխարհի քաղաքական քարտեզը: Բացատրի՛ր, թե որն է տարբերությունը պետության և տարածքի միջև:

Աշխարհի քաղաքական քարտեզն անընդհատ փոփոխվում է: Պատերազմների և նվաճումների, հեղափոխությունների և ազգային-ազատագրական շարժումների, Աշխարհագրական մեծ հայտնագործությունների և պատմաքաղաքական այլ իրադարձությունների ազդեցությամբ նրանում միշտ արտացոլվել են այնպիսի վերափոխումները, ինչպիսիք են նոր պետությունների ստեղծումն ու լուծարումը, սահմանների և տարածքների փոփոխությունը, գաղութների ստեղծումը, երկրների կողմից անկախության ձեռքբերումը, պետությունների մայրաքաղաքների փոփոխությունը և այլն: Այս ամենը, հիմնականում կախված է որոշակի ժամանակահատվածում ընթացող տարբեր աշխարհաքաղաքական իրավիճակներից և աշխարհում տեղի ունեցող տարբեր գործընթացներից, ուստի դրանք կարող են լինել ինչպես որակական, այնպես էլ քանակական փոփոխություններ:

Քանակական

- **նոր տարածքների հայտնագործում (հիմնականում՝ անցյալում),**
- **նոր տարածքների զավթում պատերազմների հետևանքով,**
- **պետության անկում և ընդարձակում,**
- **պետության կողմից ցամաքի որոշակի մասի կամավոր զիջում,**
- **ափամերձ գոտու զավթում:**

Որակական

- հասարակական-տնտեսական կարգերի պատմական փոփոխություն,
- քաղաքական ինքնիշխանության ձեռքբերում,
- պետության կազմակերպման նոր ձևերի հաստատում,
- միջպետական քաղաքական կապերի և կազմակերպությունների ստեղծում,
- այսպես կոչված «թեժ կետերի՝ միջազգային թե տարածաշրջանային հակամարտությունների, առաջացում և վերացում:

Նկ. 9.2. Փոփոխություններ աշխարհի քաղաքական քարտեզում

Հորատված
Գայլիկոնած, միջանցուկ

Քաղաքական աշխարհագրություն
Աշխարհագրության բնագավառ, որն ուսումնասիրում է քաղաքական ուժերի տարածական բաշխումը և փոխհարաբերությունները ինչպես երկրի ներսում, այնպես էլ առանձին երկրների և պետությունների խմբերի միջև՝ նրանց սոցիալ-տնտեսական կառուցվածքի հետ հարաբերությամբ, ինչպես նաև երկրների և պետությունների տարածքային ձևավորման, նրանց սահմանների, պատմական մարզերի, վարչակարգի հարցերը:

Տրիֆինիում կամ եռակի սահման
Աշխարհագրական կետ, որտեղ համընկնում են երեք պետությունների սահմանները:

Մեկնարկային գծեր
Ծովային իրավունքում ափամերձ գիծն ու ծովը բաժանող ուղիղը կոչվում է բաժանարար ուղիղ, որտեղից որոշում են տարածքային ծովի, հատուկ տնտեսական գոտու և այլ ծովային գոտիների չափերը: Միևնույն ժամանակ, մեկնարկային գծերը հանդիսանում են սահման պետության ներքին ջրերի և տարածքային ծովի միջև:

Ֆորպոստ
Առաջապոստ, առաջադիրք

Առաջադրանք

5. Վերլուծի՛ր նկ. 9.2-ը և բացատրի՛ր, թե որն է տարբերությունը աշխարհի քաղաքական քարտեզի քանակական և որակական փոփոխությունների միջև: Ըստ քեզ՝ դրանցից որի՞ ազդեցությամբ են ավելի փոխվում քաղաքական քարտեզը և սահմանները:

6. Ի՞նչ կարևոր որակական և քանակական փոփոխություններ են տեղի ունեցել վերջին տասնամյակների ընթացքում աշխարհի քաղաքական քարտեզում: Պատասխանը հիմնավորի՛ր:

Ըստ փորձագետների կանխատեսումների՝ աշխարհի քաղաքական քարտեզի վրա ապագայում ևս զգալի փոփոխություններ տեղի կունենան: Հավանական է, որ կավելանա պետությունների թիվը՝ էթնիկ սկզբունքների նախատեսմամբ: Բացի այդ, պետությունների սահմանները, որոնք չեն համապատասխանում այնտեղ ապրող էթնոսներին, կկորցնեն իրենց իմաստը: Մյուս կողմից, մեծ դեր կունենան նաև միջազգային քաղաքական կապերը:

Դեպքի վերլուծություն 1

Ծանոթացի՛ր տեղեկություններին և պատասխանի՛ր հարցերին.

XXI դարի սկզբին փորձագետները ենթադրություններ արտահայտեցին աշխարհի քաղաքական քարտեզի վրա ապագայում սպասվող փոփոխությունների մասին:

ա. Ավստրալիա: Երկիր-մայրցամաքը կբաժանվի մի քանի պետությունների, որոնցից մեկը կստեղծի տեղի բնակչությունը:

բ. Եվրոպա: Իսպանիայից դուրս կգան Կատալոնիան և Բասկերի երկիրը, իսկ Ֆրանսիայից կանջատվի Բրետանը: Բելգիան կբաժանվի Ֆլանդրիայի և Վալոնիայի: Նորվեգիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի հյուսիսային շրջաններում ապրող սամիները կստեղծեն իրենց պետությունը, և նրանց կմիանան Ռուսաստանում և Կանադայի հյուսիսային մասում ապրող ժողովուրդները: Ի վերջո, կառաջանա Արկտիկայի բևեռային շրջանի համադաշնություն:

գ. Ռուսաստան: Կառաջանան նոր պետություններ, մասնավորապես՝ Հեռավոր Արևելքում, Ուրալում, Արևելյան և Արևմտյան Սիբիրում: Անկախություն ձեռք կբերեն Թաթարստանը, Դաղստանը, Կալինինգրադը, Տուվան և Բուրյաթիան:

դ. Ասիա: Հնդկաստանը կկորցնի Փենջաբը և Քաշմիրի մի մասը: Աֆղանստանը կբաժանվի առնվազն երեք էթնիկ պետական կազմավորումների, Ֆիլիպիններից կանջատվի Մինդանաո կղզին, որտեղ բնակչության մեծ մասը մուսուլմաններ են, Ղազախստանի մի զգալի մասը կմիանա Ռուսաստանին, Չինաստանից կանջատվեն Տիբեթն ու Խինգանի շրջանը, իսկ Թայվանը՝ կմիանա, Մոնղոլիայի մի մասը անկախություն ձեռք կբերի և Ասիայում նոր պետություն կառաջանա:

ե. Աֆրիկա: Եթովպիան, բացի Էրիթրեայից, կկորցնի նաև Օգադենը (տարածք Եթովպիայի արևելքում, որտեղ ապրում են սոմալիացիներ, և որը վիճելի է եղել Եթովպիայի և Սոմալիի միջև 1970-ական թվականներին), որը կանցնի Սոմալիի կազմի մեջ, Զաիրից կանջատվեն բնական պաշարներով հարուստ գավառները՝ Կասայը և Կատանգան, քաղաքացիական պատերազմի հետևանքով Սուդանում կառաջանան երկու պետություններ՝

Արաբական (հյուսիսում) և Նիլոտներ (հարավում), Հարավաֆրիկյան Հանրապետությունը կբաժանվի երեք պետությունների, այդ թվում մեկը հաստատ կլինի Զուլուների երկիրը:

զ. Ամերիկա: Բրազիլիան կբաժանվի երեք ինքնավար շրջանների. Կանադան կվերանա՝ նրա մի մասը կմիանա ԱՄՆ-ին, մի մասը կառաջացնի այլ պետություններ, Մեքսիկան հնարավոր է բաժանվի չորս կամ ավելի մասերի: Ժամանակի ընթացքում փոխվելու է ԱՄՆ պետական սահմանների ուրվագիծը:

Հարցեր

ա. Ինչպիսի՞ բնույթի տեքստում են նկարագրված սպասվող փոփոխությունները:

բ. Արված ենթադրություններից որևէ մեկն իրականացվե՞լ է արդեն:

գ. Քո կարծիքով, սպասված ենթադրություններից ո՞րը կարդարանա, ո՞րը՝ ոչ: Բացատրի՛ր՝ ինչո՞ւ ես այդպես կարծում:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման գործընթացը սկսվել է 1914 թվականից և շարունակվում է մինչ օրս: Այս ժամանակահատվածում տեղի են ունեցել նշանակալի քանակական և որակական փոփոխություններ՝ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներ, «Սառը պատերազմի» դարաշրջան, երբ երկբևեռ, այսպես կոչված բիպոլյար աշխարհը՝ ԱՄՆ-ն և և ԽՍՀՄ-ը, հակադրվել են իրար, դարերի ընթացքում ձևավորված հսկայական գաղութային կայսրությունների փլուզում և «Աֆրիկայի տարի», Աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց պետությունների նոր խմբավորում՝ ի դեմս զարգացող երկրների, որոնք քաղաքական և տնտեսական առումով ծայր աստիճան տարբերվում են իրարից մինչև օրս:

Անցած դարի վերջին տասնամյակներում միջազգային ասպարեզում տեղի ունեցած փոփոխությունները զգալի ցնցումներ են առաջացրել աշխարհում առկա աշխարհաքաղաքական տարածքում: «Երկբևեռ» աշխարհակարգը, որի ժամանակ Արևմուտքը գլխավորում էր ԱՄՆ-ը, իսկ կոմունիստական մասը՝ Խորհրդային Միությունը, մնաց անցյալի գրկում:

Աշխարհի քաղաքական քարտեզը դինամիկ է այն փոփոխությունների պատճառով, որոնք տեղի են ունենում սահմանների, պետությունների մակերեսների և տարածքների փոփոխության արդյունքում, և որոնք հանգեցնում են ինքնիշխան պետությունների միավորման, փլուզման կամ առաջացման, ինչպես նաև, կառավարման ձևի կամ կարգի փոփոխության:

Առաջադրանք

7. Պատմության դասընթացից հիշի՛ր, թե որ ժամանակաշրջանն է կոչվում «Սառը պատերազմի» դարաշրջան և ինչո՞ւ:

8. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին աշխարհի քաղաքական քարտեզի վրա XX դարի 90-ական թվականներին քաղաքական իրադարձությունների արդյունքում, և ինչպիսի՞ն են այդ փոփոխությունները ըստ բնույթի՝ քանակակա՞ն, թե՞ որակական:

1952 թվականին աշխարհում կար 82 ինքնիշխան պետություն, իսկ XX դարի սկզբին նրանց թիվը 155 էր: Այսօրվա աշխարհի քաղաքական քարտեզի վրա, ըստ ՄԱԿ-ի տվյալների, կա 195 ինքնիշխան պետություն, նրանցից 193-ը ՄԱԿ-ի անդամ է, իսկ երկու երկրներ՝ Վատիկանն ու Պաղեստինը, ՄԱԿ-ի դիտորդի կարգավիճակ ունեն: ՄԱԿ-ի անդամների թիվը վերջին անգամ փոխվել է 2011 թվականին, երբ Սուդանը բաժանվեց երկու մասի և Հարավային Սուդանը անկախություն ձեռք բերելուց հետո միացավ ՄԱԿ-ին: (Աղբյուր՝ https://www.worldometers.info/geography/how-many-countries-arethere-in-the-world/):

Աշխարհում ներկայումս գոյություն ունեցող կախյալ տարածքների մակերեսը կազմում է ցամաքի 1%-ից պակաս:

Նկ. 9.3. Ջիբրալթարը միակ կախյալ տարածքն է Եվրոպայում: Այն պատկանում է Միացյալ Թագավորությանը: Այս տարածքը պատմականորեն կարևոր ռազմական հենակայան էր Բրիտանիայի համար և այսօր էլ այդպես է: Ջիբրալթարի անկախությունը բրիտանա-իսպանական հարաբերությունների հիմնական հարցերից մեկն է: Իսպանիան 1713 թվականին անջատված տարածքի վերադարձ է պահանջում, բայց փոխանցման ամեն փորձին գրեթե միաձայն դեմ են ջիբրալթարցիները:

Առաջադրանք

9. Ի՞նչ միտումներ են բնորոշ ժամանակակից աշխարհի քաղաքական քարտեզին:

10. Ինչ ես կարծում, ապագայում սպասվո՞ւմ են արդյոք փոփոխություններ քաղաքական քարտեզի վրա: Արտահայտի՛ր քո կարծիքը, թե ինչպես ես պատկերացնում աշխարհի քաղաքական քարտեզը 100 տարի անց:

Ժամանակակից քաղաքական աշխարհագրության հիմնական խնդիրն է բնութագրել երկրի քաղաքական կյանքի ընդհանուր տարածական պատկերն ու դրա որոշիչ գործոնների ամբողջությունը:

Քաղաքական աշխարհագրության հետազոտության հիմնական ոլորտներն են.

- Աշխարհի երկրների քաղաքական և պետական համակարգի, կառավարման ձևերի և վարչատարածքային կառուցվածքի առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

- Պետական տարածքի ձևավորման, նրա քաղաքական և աշխարհագրական տեղադրության և սահմանների ուսումնասիրությունը:
- Բնակչության սոցիալական կառուցվածքի մեջ (այդ թվում, ազգային և կրոնական կազմում) աշխարհագրական տարբերությունը:
- Հասարակական կյանքի քաղաքական ոլորտի՝ կուսակցական-քաղաքական ուժերի տեղակայման, վերլուծությունը և տարբեր իշխանությունների ընտրությունների աշխարհագրական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Ուսումնասիրվող օբյեկտների մեծաքանակության հետ մեկտեղ՝ քաղաքական աշխարհագրության մեջ ձևավորվել են մի քանի հիմնական ուղղություններ, որոնք ներկայումս դինամիկ զարգանում են:



Նկ.9.4. Քաղաքական աշխարհագրության հիմնական ուղղությունները

Քաղաքական աշխարհագրությունը սերտորեն կապված է մի շարք հասարակական գիտությունների հետ, նախ և առաջ՝ քաղաքագիտության, պատմության, սոցիոլոգիայի, միջազգային և պետական իրավունքի, ինչի պատճառով էլ այն միաձուլվում է հասարակական կյանքին:

Քաղաքական աշխարհագրության հետ մեկտեղ՝ քաղաքագիտության կարևորագույն ոլորտ է աշխարհաքաղաքականությունը, որն ուսումնասիրում է երկրի արտաքին քաղաքականության կապը աշխարհագրական դիրքի և դրա շուրջ ձևավորված քաղաքական միջավայրի հետ:

https://goo.su/gJ7uyk

Եթե ցանկանում ես ավելին իմանալ աշխարհի պետությունների մասին, այցելի՛ր կայք.

Քաղաքական քարտեզի պահապան

Քաղաքական աշխարհագրությունը լայնածավալ դիսցիպլին է, և այն լայնորեն կիրառում են տարբեր ոլորտներում: Քաղաքական աշխարհագրության նկատմամբ հետաքրքրությունը մեծապես սահմանում են հասարակության աշխարհագրական կրթությունն ու մշակույթը:

Քաղաքական աշխարհագրություն

Քաղաքական աշխարհագրությունը հասարակական աշխարհագրության ճյուղ է, որն ուսումնասիրում է հասարակության քաղաքական կյանքի տարածական կազմակերպումը, քաղաքական ուժերի տարածքային միավորումները, ինչպես նաև՝ պետությունների տարածքային ձևավորման, դրանց սահմանների, պատմական մարզերի, վարչակարգի հարցեր:

«Քաղաքական աշխարհագրություն» եզրույթի հեղինակը ֆրանսիացի քաղաքական գործիչ, փիլիսոփա և տնտեսագետ Անն Ռոբեր Ժակ Տուրգոն է, որը XVIII դարի կեսերին նկատել է կապերի առկայություն ֆիզիկական և մշակութաաշխարհագրական գործոնների ու քաղաքական գործընթացների միջև:

Քաղաքական աշխարհագրությունը, որպես անկախ գիտական ուղղություն, ձևավորվել է XIX–XX դարերի սահմանագծին, և նրա զարգացման գործընթացում մեծ դեր է կատարել գերմանացի աշխարհագրագետ Կարլ Ռիտտերը: Նա փորձում էր ապացուցել, որ բնությունը որոշիչ դեր է կատարում մարդու կյանքում, ինչը նպաստել է աշխարհաքաղաքականության ձևավորմանը:

Հետագայում այս գաղափարը հիմք դրվեց մարդաշխարհագրությանը, որի ներկայացուցիչ է Ֆրիդրիխ Ռատցելը: Վերջինս ստեղծել է բազմաթիվ տեսական աշխատություններ, այդ թվում՝ «Քաղաքական աշխարհագրությունը», որն էլ ավելի ամրապնդեց այս ոլորտի գաղափարական սկզբունքները:

Ֆ. Ռատցելի աշխատությունների շնորհիվ XIX դարի վերջին սկսվեց տարբեր պետությունների քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունների, ներքին և արտաքին քաղաքականության ուսումնասիրություն աշխարհագրական դիրքի, միջավայրի պայմանների և մշակութա-պատմական առանձնահատկությունների նախատեսմամբ: